https://doi.org/10.46991/S&L/2021.91.064

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արուս Հայրապետյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս,
Սահմանադրական դատարանի անհատական
դիմումների վերլուծության բաժնի պետ

Առևտրային գաղտնիքի ռեժիմը իրավամբ գաղտնի և տնտեսապես արժեքավոր տեղեկատվության պաշտպանության լավագույն միջոց կարելի է համարել: Առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի փոխանցման որոշ առանձնահատկություններ քննարկման առարկա կդարձնենք ստորև:

Առևտրային գաղտնիքի տնօրինման ամենատարածված եղանակը **դրա փոխանցումն** է: Գոյություն ունեն առևտրային գաղտնիքի փոխանցման մի շարք եղանակներ: Այսպես.

1. Առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության իրավատերը կարող է ազատորեն կտակել այն կամ փոխանցվել ըստ օրենքի ժառանգման կանոններով:
2. Առևտրային գաղտնիքը փոխանցվում է իրավաբանական անձի վերակազմակերպման ժամանակ՝ իրավունքների իրավահաջորդության կարգով փոխանցվելու դեպքում:
3. Առևտրային գաղտնիքը կարող է փոխանցվել **առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրի** միջոցով, որը փոխանցման ամենատարածված եղանակն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1166-րդ հոդվածը սահմանում է, որ չբացահայտված տեղեկատվությանը (այդ թվում՝ առևտրային գաղտնիքին) տիրապետող անձը կարող է այդ տեղեկատվության բովանդակությունը կազմող տեղեկատվություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն լիցենզային պայմանագրով հանձնել այլ անձի: Միևնույն ժամանակ սույն հոդվածը հղում է կատարում 1106-րդ հոդվածին, որը կարգավորում է լիցենզային պայմանագրի հետ կապված հարաբերությունները, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը առևտրային գաղտնիքի պայմանագիրը ամբողջությամբ դիտարկում է որպես լիցենզային պայմանագիր: Հարկ է նկատել, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի «Անբարեխիղճ մրցակցությունը չբացահայտված տեղեկատվության նկատմամբ» վերտառությամբ 16-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է չբացահայտված տեղեկատվությունն օրինականորեն տնօրինող անձի՝ առևտրային գաղտնիքի իրավատիրոջ՝ դրա բովանդակությունը կազմող տեղեկություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն այլ անձի՝ համապատասխան պայմանագրի հիման վրա տրամադրելու իրավունքը: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հիշյալ օրենքը չի հստակեցնում պայմանագրի տեսակը որպես լիցենզային:

Հետազոտողների մեծ մասը ավանդաբար նշում է, որ առևտրային գաղտնիքի վերաբերյալ պայմանագիրը լիցենզային պայմանագրի հատուկ տեսակ է, որի օբյեկտը չարտոնագրված տեխնիկական որոշում է, և սրա հետ կապված՝ առանձնացնում են ոչ արտոնագրային լիցենզիան՝ ի տարբերություն արտոնագրային լիցենզիայի[1]: Սակայն պետք է նշել, որ հեղինակների մեծ մասը քննադատում է լի-

[1] Տե՛ս **Акопян А. А.,** Гражданско-правовое регулирование отношений в области передачи ноу-хау, Диссертация ... кандидата юридических наук, М., 2008, էջ 77:

ցենզային պայմանագիրը որպես առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիր դիտարկելը: Այս հեղինակների կողմից քննարկվում է ոչ թե լիցենզային պայմանագիրը, այլ հենց առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիրը: Այսպես, Ի.Զենինը[1] նշում է, որ կարելի է թույլ տալ լիցենզիա (լիցենզային պայմանագիր) եզրույթի օգտագործումը նոու-հաուի (այսինքն՝ նաև առևտրային գաղտնիքի) փոխանցման պայմանագրի նկատմամբ, սակայն միայն այն իմաստով, որ, փոխանցելով նոու-հաուն որպես գաղտնի տեղեկատվություն, նոու-հաուի տիրապետողը[2] (իրավատերը) թույլ է տալիս ծանոթանալ այդ տեղեկատվությանը, և քանի որ լիցենզիան ընկալվում է որպես համաձայնություն, ապա այդ իմաստով կարելի է օգտագործել լիցենզիա եզրույթը նոու-հաուի փոխանցման պայմանագրում: Մյուս դեպքերում, ինչպես նշում է հեղինակը, լիցենզիա և լիցենզային պայմանագիր եզրույթները հարիր են միայն արտոնագրային լիցենզիայի պայմանագրին: Մենք ևս կարծում ենք, որ առևտրային գաղտնիքի փոխանցումը լիցենզային պայմանագրով այդքան էլ նպատակահարմար չէ: Փորձենք հիմնավորել մեր տեսակետը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1106-րդ հոդվածը սահմանում է, որ լիցենզային պայմանագրով մտավոր սեփականության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը մյուս կողմին թույլատրում է օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը: Ուստի կարելի նշել, որ լիցենզային պայմանագրով արտաոնագրատերը (լիցենզառու) պարտավորվում է մեկ այլ անձի (լիցենզատու) իրավունք տալ արտոնագրով պաշտպանված օբյեկտն օգտագործել պայմանագրով նախատեսված ծավալով, իսկ լիցենզառուն պարտավորվում է լիցենզատուին վճարել պայմանագրով սահմանված վճարումները և իրականացնել պայմանագրով նախատեսված այլ գործողություններ[3]: Այս պայմանագրի հիմքում ընկած է արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքը: Ինչպես հայտնի է, արտոնագրով պաշտպանված բոլոր օբյեկտները հրապարակվում են և հասանելի են բոլորին, սակայն առանց արտոնագրատիրոջ թույլատվության ոչ ոք չի կարող օգտագործել այդ օբյեկտները: Կնքելով լիցենզային պայմանագիր՝ արտոնագրատերը փոխանցում է ոչ թե գյուտը, օգտակար մոդելը կամ արտոնագրով պաշտպանված այլ օբյեկտ, այլ միայն պայմանագրի մյուս կողմին իրավունք է տալիս իր կողմից սահմանված ծավալներով օգտագործել արտոնագրված օբյեկտը. ստացվում է, որ լիցենզային պայմանագրով լիցենզատուն լիցենզառուին է փոխանցում կա՛մ իր բացառիկ իրավունքները ամբողջությամբ, կա՛մ դրանց մի մասը: Սակայն վիճակն այլ է առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրի դեպքում: Բանն այն է, որ առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրի դեպքում առաջնայինը առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության տրամադրումն է պայմանագրի մյուս կողմին: Պետք նշել, որ ի տարբերություն արտոնագրով պաշտպանված օբյեկտների, որոնք հրապարակված են, առևտրային գաղտնիքը չի կարելի օգտագործել առանց դրա բովանդակությունը կազմող տեղեկատվությունը ստանալու. որպես սրա հետևանք՝ պայմանագրով էականը ոչ թե օգտագործման իրավունքի տրամադրումն է, այլ *հենց առևտրային գաղտնիքի փոխանցումը*[4]: Եթե նույնիսկ ընդունենք, որ առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիրը լիցենզային պայմանագիրն է, ապա պայմանագրի առարկան սահմանափակվում է, ստացվում է, որ պայմանագրի առարկան միայն հայտնագործությունն է, որը ինչ-ինչ պատճառներով չի արտոնագրվել: Ընդ որում, այդպիսի պայմանագրով հիմնա-

---

[1] Տե՛ս Гражданское право в 4-х томах, Под ред. Е. А. Суханова, Том IV, М., 2010, էջ 59:

[2] Եզրույթի առավել համապարփակ ընկալման համար մեր կողմից առաջարկվում է «տիրապետող»-ի փոխարեն օգտագործել «իրավատեր»-ը:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունն քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, Տ. Կ. Բարսեղյանի և Գ. Է. Ղարախանյանի խմբագրությամբ, Ե., 2008թ., էջ 187:

[4] Տե՛ս **Акопян А. А.,** նշվ. աշխ., էջ 77:

կան պարտավորությունը բացասական է, այն է՝ չխոչընդոտել արտոնագրված օբյեկտի օգտագործումը և կիրառումը[1]: Սակայն առևտրային գաղտնիքի պայմանագրի առարկան առավել լայն է, քանի որ առևտրային գաղտնիքի բովանդակության մեջ ընդգրկվում է բազմապիսի տեղեկատվություն: Հետաքրքրական է նաև այն, որ թեև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի 1166-րդ հոդվածը կրում է «Չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունքը փոխանցելը» վերտառությունը, այս հոդվածում նշվում է ոչ թե լիցենզային պայմանագրով չբացահայտված տեղեկատվության (այսինքն՝ առևտրային գաղտնիքի) օգտագործման իրավունքի փոխանցման մասին, այլ չբացահայտված տեղեկատվության բովանդակությունը կազմող տեղեկությունների փոխանցման մասին: Այսինքն՝ քաղաքացիական օրենսգիրքը լիցենզային պայմանագրի առարկա համարում է ոչ թե օգտագործման իրավունքը, այլ հենց տեղեկատվությունը: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիրը և լիցենզային պայմանագիրը միմյանցից տարբերվում են իրենց *առարկայով*. եթե լիցենզային պայմանագրի առարկան *օգտագործման իրավունքն է*, ապա առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրի առարկան *փոխանցվող տեղեկատվությունն* է: Հաշվի առնելով այս ամենը՝ առավել նպատակահարմար է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում որպես առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիր նախատեսել ոչ թե լիցենզային պայմանագիրը, այլ այնպիսի պայմանագիր, որը հենց նվիրված կլինի առևտրային գաղտնիքի փոխանցմանը: Այդ պայմանագիրը կարելի է անվանել հենց **առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիր**: Սակայն, եթե նույնիսկ մեր օրենսդրությամբ չնախատեսվի այդպիսի պայմանագիր, պետք է նշել, որ ինչպես շատ երկրներում, այնպես էլ մեր երկրում գործում է պայմանագրի ազատության սկզբունքը, ուստի կարելի է կնքել ինչպես քաղաքացիական օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված պայմանագիր, այնպես էլ ցանկացած այլ պայմանագիր, որը թեև օրենսդրությամբ նախատեսված չէ, սակայն չի հակասում օրենքին: Այս պարագայում առևտրային գաղտնիքի փոխանցման ժամանակ կողմերը կարող են կնքել ոչ թե լիցենզային, այլ հենց առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիր:

Հարկ է նկատել, որ «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգի»[2] հեղինակները գտնում են, որ.

- Օրենսգրքի 1166-րդ հոդվածի բովանդակությունից պարզ չէ, թե չբացահայտված տեղեկատվության նկատմբամբ ինչպիսի իրավունքներ կարող են փոխանցվել մեկ այլ անձի:

- Սահմանված չեն պահանջներ այդպիսի գործարքի ձևի և բովանդակության նկատմամբ, մասնավորապես՝ գաղտնիությունը պահպանելու պահանջը և այլն:

Ուստի, չբացահայտված տեղեկատվության մասով առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Հստակեցնել, որ չբացահայտված տեղեկատվությունը կարող է ինչպես օտարվել, այնպես էլ օգտագործման հանձնվել այլ անձի:

- Սահմանել, որ չբացահայտված տեղեկատվության նկատմամբ իրավունքի փոխանցման գործարքը պետք է կատարվի գրավոր, որի բովանդակությունը պետք է լինի գաղտնի (կոնֆիդենցիալ) և հրապարակման ենթակա չլինի: Հստակեցնել, որ ինչպես տեղեկատվությունը տրամարդող, այնպես էլ ստացող անձինք

---

[1] Տե՛ս **Гуляева Н. С.,** Коммерческая тайна в предпринимательской деятельности: сравнительно-правовое исследование законадатеяьства РФ, зарубежних государств и международно-правового регулирования, Диссертация ... кандидата юридических наук, М., 2002, էջ 95:

[2] Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջ՝ http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf

պարտավոր են այն պահել գաղտնի, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ[1]:

Հաշվի առնելով առևտրային գաղտնիքի փոխանցման առանձնահատկությունները՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1166-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 1166. Առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիրը

1. Առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրով մի կողմը (առևտրային գաղտնիքի իրավատերը) պարտավորվում է մյուս կողմին (առևտրային գաղտնիք ձեռքբերողին) տրամադրել պայմանագրով սահմանված ծավալի առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվություն, իսկ առևտրային գաղտնիք ձեռքբերողը պարտավորվում է վճարել պայմանագրով սահմանված վճարումները և իրականացնել պայմանագրով նախատեսված այլ գործողություններ:

2. Առևտրային գաղտնիքի իրավատերը պարտավոր է գաղտնի պահել պայմանագրով փոխանցված տեղեկատվությունը մինչև պայմանագրի գործողության ավարտը, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ:

3. Առևտրային գաղտնիք ձեռքբերողը պարտավոր է գաղտնի պահել պայմանագրով փոխանցված տեղեկատվությունը ինչպես պայմանագրի գործողության ընթացքում, այնպես էլ պայմանագրի գործողության ավարտից հետո, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ»:

Ելնելով պայմանագրերի դասակարգման ընդհանուր չափանիշներից՝ ներկայացնեք մեր կողմից սահմանված առևարային գաղտնիքի փոխանցման պայմանագրի հատկանիշները, տարրերը և որոշ այլ առանձնահատկություններ.

1. Առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիրը *կոնսենսուալ պայմանագիր* է: Այս պայմանագրի պարագայում հսկայական դեր է խաղում ոչ թե հենց տեղեկատվության փոխանցման պահը, այլ պայմանագրի էական պայմանների վերաբերյալ կողմերի համաձայնության գալու պահը: Մանավանդ որ, պայմանագրի առանձնահատկություններից ելնելով, երբեմն տեղեկատվության փոխանցման պահը որոշելը բավականին բարդ է: Որպես օրինակ կարող է լինել այն դեպքը, երբ առևտրային գաղտնիքի իրավատերը պայմանագրի պայմաններին համապատասխան պարտավորվում է մյուս կողմին սովորեցնել աշխատանքի որոշակի մասի կատարման առանձնահատկությունները: Շատ դեպքերում այդպիսի ուսուցումը իրականացվում է շատ երկար ժամանակ, և որոշել՝ երբ են անցել մյուս կողմի աշխատակիցներին համապատասխան գիտելիքները, շատ դժվար է[2]:

2. Առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիրը *երկկողմ* պայմանագիր է: Սրանով երկու կողմն էլ ձեռք է բերում և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ: Մի կողմը պարտավորվում է հանձնել համապատասխան տեղեկատվությունը, իսկ մյուս կողմը դրա համար վճարել պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:

3. Այս պայմանագիրը *հատուցելի* պայմանագիր է, քանի որ պայմանագրի մի կողմը պարտավորվում է վճարել ստացված տեղեկատվության դիմաց:

Պայմանագրի կողմերն են *առևտրային գաղտնիքի իրավատերը*, որ պարտավորվում է տրամադրել առևտրային գաղտնիքը, և *առևտրային գաղտնիքը ձեռքբերողը*, որը ձեռք է բերում առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը՝ դրա դիմաց վճարելով որոշակի գումար և իրականացնելով պայմանագրով նախատեսված այլ գործողություններ:

Ինչպես արդեն նշվել է, առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրով առաջնայինը ոչ թե առևտրային գաղտնիքի օգտագործման իրավունքի տրամադ-

[1] http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf

[2] Տե՛ս **Акопян А. А.,** նույն տեղում, էջ 77:

րումն է, այլ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության փոխանցումը, հետևաբար առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրի առարկան ոչ թե օգտագործման իրավունքն է, այլ *առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը*[1]: Կողմերի կոնկրետ իրավունքները և պարտականություններն ամեն առանձին դեպքում սահմանվում են տարբեր կերպ, ուստի առավել նպատակահարմար է ամրագրել տեղեկատվության կամ տվյալների փոխանցման փաստը: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս առավել հստակ բնութագրել պայմանագրի առարկան: Այսպիսով՝ պայմանագրի առարկան տեղեկատվությունն է: Ելնելով առևտրային գաղտնիքի բնույթից՝ այն որպես կանոն իրավատիրոջ կողմից փոխանցվում է նկարագրության միջոցով: Եթե տեղեկատվության բովանդակությունը մեծ է, ապա դրա նկարագրությունը տրվում է առանձին հավելվածով, որը պայմանագրի անբաժանելի մասն է: Այս նկարագրությունը պետք է ձեռքբերողին հնարավորություն տա օգտագործելու առևտրային գաղտնիքը: Նկարագրությունից բացի՝ առևտրային գաղտնիքը փոխանցվում է նաև նյութական տարբեր կրիչների միջոցով: Պայմանագիր կնքելիս կողմերը կարող են համաձայնության գալ վերջիններիս վերաբերյալ: Դրանք կարող են լինել տարբեր՝ պարզ թղթային կրիչից միևչև ամենաբարդ համակարգչային կրիչներ[2]:

Անդրադառնալով կողմերի իրավունքներին և պարտականություններին՝ պետք է նշել, որ առևտրային գաղտնիք ձեռքբերողի հիմնական պարտականությունն է *փոխանցել իրավատիրոջը առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը*, իսկ իրավունքն է *ստանալ համապատասխան փոխհատուցում* առևտրային գաղտնիքի փոխանցման համար: Առևտրային գաղտնիքը ձեռքբերողի հիմնական իրավունքն է *պահանջել իրեն տրամադրել առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը*, *պայմանագրի պայմաններին համապատասխան օգտագործել առևտրային գաղտնիքը*: Առևտրային գաղտնիքը ձեռքբերողի հիմնական պարտականությունն է փոխանցման ակտով ընդունել առևտրային գաղտնիքը և վճարել դրա դիմաց:

Կախված առևտրային գաղտնիքի բնույթից և առանձնահատկություններից՝ կողմերը, բացի հիմնական իրավունքներից և պարտականություններից, կարող են սահմանել նաև այլ իրավունքներ և պարտականություններ՝ տեխնիկական փաստթղթերի, երկուստեք տեխնիկական ու կազմակերպչական աջակցության տրամադրման, առևտրային գաղտնիքի պաշտպանության, առևտրային գաղտնիքի հետագա կատարելագործումների վերաբերյալ: Այս իրավունքների և պարտականությունների սահմանումը կախված է կողմերի հայեցողությունից և պայմանագրի առանձնահատկություններից: Սակայն գոյություն ունի այնպիսի պարտականություն, որը պարտավոր են պահպանել ինչպես առևտրային գաղտնիքի իրավատերը, այնպես էլ ձեռքբերողը. դա *առևտրային գաղտնիքի պահպանության պարտականությունն* է, որը առևտրային գաղտնիքի փոխանցման պայանագրի առանցքային պայմաններից մեկն է: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի 1166-րդ հոդվածի համաձայն՝ առևտրային գաղտնիքի գաղտնիության պահպանման պարտականությունը կրում է միայն լիցենզառուն (այսինքն՝ առևտրային գաղտնիք ձեռքբերողը), սակայն մեր կարծիքով այս մոտեցումը այդքան էլ հիմնավորված չէ: Առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրի առարկան գաղտնի տեղեկատվությունն է, որի իրավատերը ձեռնարկում է օրենքով չարգելված ամեն միջոց տեղեկատվության գաղտնիության պահպանման համար: Փոխանցելով իր առևտրային գաղտնիքը՝ առևտրային գաղտնիքի իրավատերը ձգտում է ամեն կերպ համոզված լինել, որ առևտրային գաղտնիք ձեռքբերողը այդ տեղեկատվությունը չի փոխանցի այլ անձանց, կպահպանի դրա գաղտնիությունը: Սակայն պետք է նշել, որ գաղտնիության

[1] Տե՛ս **Акопян А. А.,** նույն տեղում, էջ 102:
[2] Տե՛ս **Акопян А. А.,** նույն տեղում, էջ 106:

պահպանումը էական պայման է ոչ միայն նրա իրավատիրոջ, այլ նաև առևտրային գաղտնիքը ձեռքբերողի համար, քանի որ առևտրային գաղտնիքի ձեռքբերման պահից նա նույնպես շահագրգռված է, որ այդ տեղեկատվությունը չհրապարակվի, այդ թվում՝ առևտրային գաղտնիքի իրավատիրոջ կողմից: Այս իսկ պատճառով առևտրային գաղտնիքի գաղտնիության պահպանման պարտականությունը նպատակահարմար է նախատեսել ոչ միայն առևտրային գաղտնիքը ձեռքբերողի, այլ նաև առևտրային գաղտնիքի իրավատիրոջ համար, քանի որ եթե փոխանցողը պայմանագրի կնքումից հետո որոշ ժամանակ անց հրապարակի առևտրային գաղտնիքը, ապա դրանից էական վնասներ կկրի առևտրայիև գաղտնիք ձեռքբերողը. ուստի և՛ առևտրային գաղտնիքը ձեռքբերողի, և՛ առևտրային գաղտնիքի իրավատիրոջ իրավունքները պաշտպանելու համար պայմանագրում պետք է նախատեսվի, որ կողմերը պետք է պահպանեն առևտրային գաղտնիքի գաղտնիությունը, ընդ որում՝ գաղտնիքի իրավատերը այս պարտականությունը պետք է կրի միայն առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրի գործողության ընթացքում, իսկ ձեռքբերողը ինչպես այդ ժամանակահատվածում, այնպես էլ դրա ավարտից հետո, իհարկե եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ:

Առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագրում առավել մեծ նշանակություն է ստանում **գաղտնիության պահպանման պահանջը՝** որպես պայմանագրի առանցքային պայմաններից մեկը: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը մանրամասն չի անդրադառնում տեղեկատվության գաղտնիության պահպանման հիմնախնդրին: Այսպես, 1165-րդ հոդվածը սահմանում է, որ չբացահայտված տեղեկատվություն (այսինքն' առևտրային գաղտնիք) ապօրինի հիմքերով ստացած, տարածած կամ օգտագործած անձը պարտավոր է այդ տեղեկատվության օրինական տիրոջը (իրավատիրոջը) հատուցել պատճառած վնասները: Այս հոդվածը կարելի է կիրառել նաև այն դեպքերում, երբ պայմանագրով առևտրային գաղտնիք ձեռք բերած անձը, խախտելով պայմանագիրը, հրապարակում է առևտրային գաղտնիքը: Իսկ օրենսգրքի 1166-րդ հոդվածն էլ սահմանում է, որ լիցենզառուն պարտավոր է պատշաճ միջոցներ ձեռնարկել տեղեկատվության գաղտնիության պահպանման համար, և նրա այդ պարտականությունը, եթե պայմանագրով այլ բան սահմանված չէ, գործում է նաև պայմանագրի դադարումից հետո: Ինչպես երևում է, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը այդքան էլ մանրամասն չի անդրադառնում գաղտնիության պահպանմանը: Այս պարագայում պայմանագրի կողմերը հետագա խոչընդոտներից խուսափելու համար կարող են պայմանագրում սահմանել պայմաններ, որոնք ուղղված են տեղեկատվության գաղտնիության պահպանմանը: Փորձենք առանձնացնել այն նվազագույն պայմանները, որոնք կողմերը կարող են նախատեսել պայմանագրում.

1. Կողմերը պարտավորվում են պահպանել պայմանագրով փոխանցված տեղեկատվության և դրա հետ առնչվող ցանկացած փաստաթղթի, նմուշի, ծրագրի գաղտնիությունը:

2. Այն դեպքում, երբ պայմանագրով փոխանցված տեղեկատվության հետ, բացի պայմանագրի կողմերից, պետք է առնչվեն նաև նրանց աշխատակիցները, կողմերը պարտավորվում են ձեռք առնել համապատասխան միջոցներ իրենց աշխատակիցների կողմից տեղեկատվության չհրապարակման համար (օրինակ՝ ներքին փաստաթղթերի միջոցով):

3. Պայմանագրով կարող է սահմանվել, որ առևտրային գաղտնիքը կտրամադրվի միայն այն աշխատակիցներին, որոնք անմիջականորեն մասնակցում են ծավալվող գործունեությանը:

4. Կողմերը պարտավորվում են ձեռք առնել բոլոր միջոցները տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:

5. Որոշակի դեպքերում կողմերը կարող են սահմանել այն միջոցառումների ցանկը, որոնք անհրաժեշտ են տեղեկատվության պահպանման համար (օրինակ՝ որոշակի համակարգչային ծրագրերի տեղադրում):

6. Պայմանագրով սահմանված պարտավորությունները խախտելու դեպքում կողմերը որպես պատասխանատվության միջոց կարող են սահմանել կա՛մ տուգանքի վճարում, կա՛մ վնասների փոխհատուցում, կա՛մ այս երկուսը միասին: Հարկ է նշել, որ առավել նպատակահարմար է սահմանել որոշակի տուգանք, քանի որ առևտրային գաղտնիքի գաղտնիությունը խախտելու դեպքում վնասների չափի որոշումը կարող է առաջացնել որոշակի դժվարություններ[1]:

Սակայն միայն այս պայմանների նախատեսումը չի կարող ամբողջությամբ ապահովել առևտրային գաղտնիքի գաղտնիության պահպանումը: Այդ նպատակով առևտրային գաղտնիքի փոխանցման պայմանագիր կնքելիս պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- Պետք է հստակ տրվի գաղտնի տեղեկատվության սահմանումը:
- Հստակ պետք է նշվեն գաղտնիության պահպանության ժամկետի սկիզբը և ավարտը: Պետք է սահմանել, որ գաղտնիության պահպանման պարտականությունը գործում է նաև պայմանագրի ավարտից հետո (եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով):
- Պետք է կոնկրետ նշվի այն նպատակը, որի համար պետք է օգտագործվի առևտրային գաղտնիքը, որպեսզի ձեռքբերողը այդ տեղեկատվությունը չօգտագործի այլ նպատակներով:
- Պայմանագիր կնքելիս պետք է համոզվել, որ առևտրային գաղտնիքը պաշտպանված չէ արտոնագրով:
- Հնարավորության դեպքում սահմանել այլ միջոցներ, որոնք պետք է ձեռնարկեն կողմերը առևտրային գաղտնիքի գաղտնիությունը պահպանելու համար:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПЕРЕДАЧИ ПРАВ НА КОММЕРЧЕСКУЮ ТАЙНУ

Арус Айрапетян
Преподаватель кафедры гражданского права ЕГУ,
Начальник отдела анализа обращений граждан
Конституционного Суда РА

В статье рассматривается самый распространенный способ распоряжения коммерческой тайной – передача коммерческой тайны и методы ее передачи. В частности, подробно обсуждается передача коммерческой тайны посредством контракта. Раскрывается характер последнего, обсуждаются вопросы взаимосвязи договора о передаче коммерческой тайны и лицензионного договора, и, как следствие, предлагается под договором о передаче коммерческой тайны в Гражданском кодексе РА предусмотреть не лицензионный договор, а договор, который будет посвящен передаче коммерческой тайны и будет отражать ее сущность и особенности. Этот договор предлагается назвать соглашением о передаче коммерческой тайны.

[1] Տե՛ս Гражданское право в 4-х томах, Под ред. Е. А. Суханова, Том IV, М., 2010, էջ 63:

С учетом представленных соображений предлагается отредактировать статью 1166 Гражданского кодекса РА под заглавием “Соглашение о передаче коммерческой тайны” с всестороннем урегулированием последнего.

В статье представлены признаки и элементы договора о передаче коммерческой тайны, определенные автором, и некоторые другие особенности договора.

SOME FEATURES OF THE TRANSFER OF RIGHTS TO COMMERCIAL SECRETS

Arus Hayrapetyan
Lecturer at the YSU Chair of Civil Law,
Head of the Individual Complaints Analysis
Division of the Constitutional Court

The article discusses the most common way to dispose commercial secrets - the transfer of commercial secrets and its methods. As the most common method of transferring commercial secrets, the transfer of commercial secrets by means of a contract is discussed in detail.

The nature of the latter is revealed, issues of the relationship between the agreement on the transfer of commercial secrets and the license agreement are discussed and as a result, It is proposed under the agreement on the transfer of commercial secrets in the Civil Code RA to consider a not the licensing agreement, but an agreement that will be devoted to the transfer of commercial secrets and will reflect the essence and characteristics of the latters. It is proposed to call this agreement an agreement on the transfer of commercial secrets.

Taking into account the presented considerations, it is proposed to rewrite and edit the Article 1166 of the Civil Code of RA under the title ´´ The Agreement on the transfer of commercial secrets ´´ with a broad regulation of the latter: the content of the proposed article is also given.

The article also presents the signs and elements of the agreement on the transfer of commercial secrets, as defined by the author, and some other features of the latter.

Բանալի բառեր – առևտրային գաղտնիք, լիցենզային պայմանագիր, տեղեկատվություն, տեղեկություն, նուու-հաու
Ключевые слова: Коммерческая тайна, лицензионное соглашение, информация, ноу-хау
Key words: Commercial secrets, trade secrets, license agreement, information, know-how